


H A P M.
H 2-702a

917

2683



891.995

9-59

891.99 Ժ
9-59

2011-05



Ա.ԼՅՈՇԻ ԿԱԼՈՇՆԵՐԸ

(ԸՍՏ Մ. Շ.)

Ունեւոր-չունեւոր մեր Այոշեն,
ունեւոր մի գույգ նոր կալոշներ:
Վոչ մի բանով ավել չեյին,
վոչ ել պակաս ուրիշներէց.
ցելս որերին՝ միշտ փողոցում,
կամ տան հատակն եյին թրջում:



Յեկան մեկ որ Այոշի մոտ.
— «Չանձրացել ենք ցելս կոխ տալուց,
յեկել ենք քեզ հրաժեշտ տալու.
արձակիր մեզ մեր հայրենիք,
շողենալով շուտ կրհասներ:
Բարձր ծառի ծընունդ ենք մենք,
սպիտակ-սպիտակ ծորել ենք մենք.
Վայրի խարտյաշ ձիանց վրա
նեղրերը սե յերբ մեզ տարան,
յոթ ջրի մեջ հա թրջեցին,

Պատ. խմբագիր՝ Ռ. ԱՂԱԲԱԲ

Տեխ. խմբագիր՝ Գ. ԲԱՌՈՒԲՅԱՆ
Սրբագրէ՝

Նկարիչ՝ Ա. ՍՈՒԼԹԱՆՈՎ

Типография изд. ЦК КП (б) Гр. „Комунисти“ им. т. Тодрия.

Главлит № 16032

Заказ №4131


Тираж 1000.

յոթ կըրակով հա խաշեցին:
 Այժմ թըջված ենք ու գիտուն,
 կյանքում յեփված ու դիմացկուն.
 բայց մեր ուրը շատ չե յերկար,
 մարդն ե մաշում մեզ չարաչար:
 Դառն արցունքոտ աչքերով մեր
 քեզ ենք դիմում, Ալյոշ ընկեր»:

Շատ բարի յեր մեր Ալյոշեն.
 — «Հանգիստ խըղճով, իմ կալոշներ,
 արցունք տանել յես չեմ կարող,
 դեպ Աֆրիկա յերթաք բարով:
 Քեֆ քաշեցեք ուզածի չափ,
 բանից կարոտ դուք չըմնաք:
 Թե մնացիք վորք, անխնամ,
 յես խոմ եսանդ միշտ կամ ու կամ»:
 Եսպես՝ միմյանց ձեռք թոթվելով՝
 բաժանվեցին հաշտ ու սիրով:

Բախտի բերմամբ եզ ուրերին
 պիտոներենք Ասիայից
 մեկնում եյին դեպ Աֆրիկա՝
 կապ հաստատեն ընկերական:
 Քառանիվով յերկաթուղու,
 կալոշներն ել մի գամբյուղում՝
 Ճամբա ընկան. —

— Ճամբա, ճամբա...



Պիոներներն Աֆրիկայում
մատղաշ ռեաինե անտառում
կալոշներին ցած են բերում:

Ու յերկուսն ել միաբերան՝
— «Բարե, քույրեր, — ասին նրանք, —
ձեր ցեղիցն ենք, ձեզ մոտ յեկանք»:
Բայց ռեաինե ծառերն ասին.

— «Այժմ իրար ել չենք սաղի.
Մենք դեռ անփորձ,
Մենք դեռ անեփ,
Անշուր, անծեփ.

Իսկ դուք արդեն խանութներում
լավ գին ունեք ու լավ անուշ.
ձեզ չենք կանչել, չենք ընդունում»:

Անհյուրընկալ վարմունքից այդ
կալոշները չըշփոթվեցան.
աֆրիկական առյուծներին
մոտեցան ու զրբույց արին.
— «Կալոշներ ենք ազնիվ ցեղից,
ուռենք, ճիշտ ե, մաշված տեղեր,
ծակոտիկներ կըրընկի մոտ,
մեզնից գալիս ե մարդահոտ:
Գազաններից հարզ ու պատիվ
թե վոր կուզեք դուք ուռենալ,
կալոշ հագեք ձեր վոտներին»:

— «Եդ ել բան ե, — ասին նրանք,
բա մեր ճանկերն եդ ուր մընան.
չե, չե, ախպեր, դարձեք դուք յետ,
թողեք մեզ մեր ճանկերի հետ»:
Հոտոտելով ծանր ու բարակ՝
թողին նըրանց խեղճ, անճարակ:

Կալոշները այս անգամին
մեր պիոներ ընկերներին
մոտ վազեցին ու ասեցին.
— «Կալոշներ ենք մենք աննման,
գիտենք, վոր ձեզ միշտ պետք կըզան.
ուռենք փափուկ ու պինդ տակեր,
մի քանի որ փորձեք, հագեք»:


Պիոներներն աֆրիկական
այս խոսքերից շատ զարմացան.
— «Հա, հա, հա, հա, ի՞նչ եք ասում,
են վոր մեկն ե կալոշ հագնում
Աֆրիկայում շող ու կրակ.
կապիկները վոր իմանան,
մեզ կըշինեն ծաղր ու ծանակ»:
Ճամբորդները քուռ ու փոշման
գիր գրեցին յերկար ու մեկ,
թե՛ եսպիսի, եսպիսի բան...
— «Խղճա դու մեզ, Ալյոշ ընկեր,
ես ի՞նչ աշխարհ ենք մենք ընկել.

մեր զինն այստեղ ի՞նչ է, — վոչինչ,
 ուր վոչ ցեխ կա, վոչ կոբզին լի՞ճ
 Այ, ինչ կասենք Լենինգրադին,
 զիշեր-ցերեկ ամբողջ տարին
 վերև-ներքև ջուր է ու ջուր,
 անձրև, անձրև, կարկուտ ու ձյուն,
 Վորոշեկ ենք աշխարհ աշխարհ, —
 լետ գանք նորից Լենինգրադ,
 բայց թե ճամբի փող է պետք մեզ,
 շուտ դըրկի, վոր շուտ էլ գանք»։


Պատասխանեց մեր Ալյոշեն.

— «Փողից գուրկ եմ թեև յես,
 բայց չըտըխրեք, իմ կալոշներ,
 մի լավ խորհուրդ կըտամ ձեզ.
 փայտ ամրացրեք ձեր կըրընկին,
 վրան մի-մի առագաստ,
 ծովով հանգիստ ճամբա ընկեք,
 կուրախանամ, թե վոր գաք»։

Առագաստը քամուն տված՝
 ջուրն են ճեղքում ովկյանի,
 ու գնում են, գնում առաջ՝
 հասնեն իրենց ընկերին։
 Ել ի՞նչ ծովեր նըրանք չանցան,
 ի՞նչ նորանոր աշխարհներ,
 վերջն էլ տեսան ուրախացած,
 վոր Լենինգրադ են հասել։



ու մեկ ել, ըհը՝
 ջըրի ռաստ եկան:
 Կատաղի մի գետ.
 միտք արին եղտեղ՝
 վոնց հասնեն գետի
 են մյուս ափին,
 վոր հանկարծ մեկ ել
 ջուրը չըթափեն:
 Մեկ ել ցողունը
 ես ափից ջըրի
 ձգվեց ու հասավ
 ափը գիմացի:
 — Ա՛յ քեզ լավ կամուրջ, —
 տրեխը կանչեց
 ու կողքի վըրա
 առաջ արշավեց:
 Բայց գեռ չեր հասել
 նա ճամբի կեսին՝
 հանկարծ յերկուսն ել
 մեկտեղ, միասին
 ջուրը թափեցին:
 Ցողունը ճըկոեց,
 յերկու կես յեղավ,
 տրեխին ել իր հետ



Նըրի տակն արավ:
 Բա մեր փուշի՞կը, —
 — հա, հա, հա, հա, հա...
 եղբան ծիծաղին
 ել հալ կըմընա:
 Փուշիկ դու, փուշիկ,
 ենքան խնդացիր,
 վոր ինք էլ տըրանիկ՝
 մեջից պայթեցիր:



ԱՐՋԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

(Ժողովրդական)

Մի որ մարդը հիմարացավ
 ու արջի հետ ընկերացավ.
 համով, սիրով ու միաբան
 ապրում էին ախպոր նման:
 Ամռան մի որ,
 մի խիստ շոգ որ
 հնձի վերջը մարդը դադրած՝
 դարձավ — յեղբայր արջին սասայ.
 — Արջիկ-փառչիկ,
 իմ ախպերիկ,
 քիչ դնջանամ
 ես շվաքին,
 ծառի տակին:
 Հենց դու ապրես՝
 ենպես անես,

Վոր վոչ մի շունչ չխանգարի,
քաղցր քունս հարամ չանի: —

Են պառկելն եր

ու քնելն եր:

Եդ բոպեյին

Մի տղզան ճանն

ուղիղ յեկել,

մարդու ճակտին

վեր եր յեկել:

Արջը տեսավ. վնչ-տեսներ նա,

բարկանում եր, վոր հեռանա,

բարկանում եր, թքում, մրում,

մրթմրթում եր ու հայհոյում:

Մեկ տեսնում եր՝ ճանճը չկա,

մեկ ել կրկին՝ ճակտի վրա:

Խեղճ կենդանին ախպոր խաթեր

տեղը վոր դար՝ ջուրը կընկներ:

Դե, դու. կացի, այ չար տըղզան,


տես թե գլխիդ ինչ ոյին գամ: —

Ու մեր արջը ճարը կտրած,

մի աժդահա քար խըտըտած՝

տարավ-բերեց,

59-85004



ճանճին արեց,

վոր չտվեց...

Մարդու գլուխն արեց յերկու կես.

— Ոխանյ, ոխանյ, մեկ ել կանեմ,

այ աներես:

Իսկ մեր ճանճը մաքուր ողում

տըզտղում եր, անագ անում:


— Ի՞նչ ասեմ քեզ պես կենդանուն,

եդ ե՞ «արջի ճառայություն»:

—

Ու են որից հարմար դեպքում

ես առաին են միշտ գործ ածում:



ԱՄԲԵՆ ՈՒ ՌԱՄԲԵՆ

(Հնդկական զուլյց)

Մի մեծ տուն — մեջն ապրում եր խորամանկ կստուն:

Մի մեծ տուն — տան մեջ բազմաթիվ մկներ:

Կատուն վորսում եր մկներին, անուշ անում և ազատ կյանք քաշում:

Ժամանակ անցավ... Կատուն ծերացավ, ել առաջվա ույժը չուներ, դժվար եր նրա համար մկներ վորսալը:

Մտածեց, մտածեց ու վերջը հնարը գտավ:

Ժողովեց բոլոր մկներին ու ասաց.

— Լսեցեք, մուկիկներ, յես եմ կանչել ձեզ: Ուղուս եմ բնությունս փոխել: Վորոշել եմ այլևս ձեռք չլտալ ձեզ: Ազատ, անհոգ վազվզեցեք, մի վախենաք

ինձանից ձեզ ել վտանգ չկա: Բայց մի պահանջ եմ
գնում ձեր առաջ. ամեն ուր, ուրը յերկու անգամ իրար
յետևից իմ առաջով պետք ե անցնեք, մեկ-մեկ գլուխ
տաք և հեռանաք: Յես ձեզ ձեռք չեմ տա:

Մկները վոր լսեցին, թե կատուն իրենց ձեռք չի
տալու, ուրախությունից վեր-վեր թռան և, ել ինչ
խոսք, բոլորն ել պայմանին հավան կացան:

Յեվ այսպես, կատուն նստեց անկյունում, իսկ
մկները մեկ-մեկու յետևից սկսեցին անցնել նրա առա-
ջով: Անցնում են և գլուխ տալիս: Իսկ կատուն հանգիստ
զիրք եր ընդունել: Հենց վոր վերջին մկնիկը մոտե-
ցավ, կանգ առավ և գլուխ տվեց, մեր կատուն՝ հանվ
— վրա ընկավ և բռնեցն ու ուտելը մեկ արավ:

Մյուս մկներն արդեն առաջ եյին անցել և վոչինչ չը-
նկատեցին:

Յեվ այսպես՝ ուրը յերկու անգամ, կատուն հանգիստ
որական յերկու մուկ եր անուշ անում ու շատ գոհ
եր իր վիճակից:

Յերկու մտերիմ ընկերներ՝ Սմբեն ու Ռամբեն
նկատեցին, վոր քանի գնում, այնքան իրենց ընկեր-
ների թիվը պակասում ե:



Մի լավ միտք արին ու վորոշեցին կատվին հետեւել:

Ամեն անգամ, հենց վոր մկներն յերբէն սկսվում էր, իրենց վորոշման համաձայն, Ամբեն քայլում էր առաջից, իսկ Ռամբեն՝ ամենից վերջը:

Անցավ Ամբեն, խորը գլուխ տվեց կատվին և ձայն տվեց ընկերոջը.

— Յեղբայր Ռամբե, վորտե՞ղ ես:

— Այստեղ եմ, այստեղ, յեղբայր Ամբե, — պատասխանեց Ռամբեն մյուս ծայրից:

Ու այսպէս նրանք շարունակ միմյանց ձայն ելին տալիս, մինչև վոր բոլոր մկները կատվի մոտից հեռանում ելին:

Չարանում էր կատուն, բայց հենց վոր Ամբեյի ձայնը լսում էր, չէր համարձակվում ձեռք տալ Ռամբեյին:

Չարանում էր կատուն, բայց ճարն ինչ, քաղցած փորով պառկում էր քնելու:

Հետեյալ որը նույն բանը կրկնվեց. Ամբեն կանչում էր, Ռամբեն պատասխանում: Դարձյալ կատուն վախենում էր դիպչել Ռամբեյին ու դարձյալ պառկում էր քաղցած փորով:

Յերբորդ որը մկները, ինչպէս միշտ, անցնում ելին կատվի առջևով:

Ամբեն կանչեց բարձրաձայն.

— Յեղբայր Ռամբե, յեղբայր Ռամբե, վորտե՞ղ ես:

— Այստեղ եմ, յեղբայր Ամբե, այստեղ եմ, — ձայնակցեց Ռամբեն, իսկ ինքն աչքի տակով նայեց կատվին, վոր չլինի թե հանկարծ հարձակվի:

Համբերությունից դուրս յեկավ կատուն, թռավ մկան վրա, բայց Ռամբեյի հետքն անգամ չէր մնացել: Մնացած բոլոր մկներն էլ փախան այս ու այն կողմ. տեսան, վոր գործ ունեն խաբեբա կատվի հետ, վոր նրանից վտանգն անսպաւառ է:

Ու այն որվանից մկներն այլևս կատվի առաջով չեյին անցնում յերբեք:





ՈՎ ՈՒՄԻՑ ՎԱԽԵՑԱՎ

(Ռուսական հեքիաթ)

— Խրճիթում ամենևին ջուր չկա, ասաց տատիկը. —
գնամ առուն, ջուր բերեմ:

Դուլերն ուսափայտով վերցրեց ու գնաց:

Նայեց թոռնիկը, նրա սիրտն եւ ջուր ուզեց. վերց-
րեց ավելի փոքր դուլերը, հագցրեց ուսափայտի ծայ-
րերին ու գնաց: Նայեց աքլորիկը, նա յեւ ուզեց իր
համար ջուր բերել: Վերցրեց եւ ավելի փոքր դուլերը,
հագցրեց ուսափայտի ծայրերին և վազեց տատիկի
ու թոռնիկի յետևից: Մուկիկն իր ծակից դուրս նա-
յեց: Նա յեւ ուզեց իր համար ջուր բերել, վերցրեց
ամենափոքր դուլերը — մատնոցի չափ, — հագցրեց
ուսափայտի ծայրերին ու վազ ավից:

Ջրով լիքը դուլերով տուն ելին դառնում:



Առջից գնում եր տատիկը, նրա յետևից թոռնիկը, ապա աքլորիկը, իսկ բոլորից վերջը հանգիստվոր կերպով քայլում եր մուկիկը:

Ճանապարհի վրա, հասած խնձորենու տակ պառկել-քնել եր մոխրագույն նապաստակը: Գիշերը դաշտում յերկար այս կողմ, այն կողմ՝ վազվզելուց հոգնել եր և հիմա հանգստանում եր:

Քամին որորում եր խնձորենու ճղները, վորոնք ծանրաբեռնված էյին հյութեղ, խոշոր խնձորներով: Հանկարծ մի խնձոր պոկվեց ու թրլըմփ — ուղիղ նապաստակի ճակատին: Նապաստակը սրտաձաք յեղած՝ քնից վեր թռավ և փաթաթվեց ուղղակի տատիկի վոտներին:

Վախեցավ տատիկը, վայր ընկավ, ջուրը թափեց: Հետո վեր թռավ, վազեց ու թագնվեց:

Նապաստակն սկսեց վազել և արշավեց ուղղակի թոռնիկի վրա: Թոռնիկն ընկավ, ջուրը թափեց, հետո վեր ցատկեց, վազեց ու թագնվեց:

Ավելի շատ վախեցավ նապաստակը և յերկյուղից այլևս վոչինչ չտեսներով, թռավ ուղղակի աքլորիկի վրա:


Աքլորիկը բարձր ծղրտաց, վայր գցեց դույլերը՝ հետո վազեց ու թագնվեց:

Մուկիկը հենց վոր նկատեց փախչող նապաստակին, վայր նետեց իր փոքրիկ դույլերը, փախավ մըտավ իր բունը:

Նստել եր տատիկն ու մտածում եր.
— Լավ ազատվեցի արջի ձեռքից:



Նստել եր թռռնիկն ու մտածում եր.
— Ինչ լավ ազատվեցի գայլի ձեռքից:



Г. 1937

АКТ №


Вкладн. л.

28

Աքլորիկը նստած մտածում եր.
— Ինչ բախտ եր, վոր կարողացա ազատվել կա-
տաղի աղվեսից:



Մուկիկը բնում նստած մտածում եր.
— Ա՜յ թե լավ փախա գազան կառվի ձեռքից:



29

Իսկ նապաստակը, իր բոլոր ույթերը լարած, առանց
յետ նայելու՝ դեռ շարունակում եր վազել: Վազեց
անտառ ու Թագնվեց տերևների կույտի մեջ:

Խեղճը հազիվ եր շունչը յետ բերում: Յերկար ժա-
մանակ չեր կարողանում ուշքի գալ:

Վերջապես շունչը յետ բերեց, ուշքի յեկավ, մտա-
ծեց.

— Համա տհ կերա, հա... Վոնց եյին յետևիցս
ընկել. քիչ մնաց բռնեյին: Բայց ինձ չղիկ՝ կասեն,
փախա ու ազատվեցի:



Ց Ա Ն Կ

1. Ալյուշի կալոշները	12
2. Փուչիկը, ցողունն ու տրեխը	3
3. Արջի ծառայութիւնը	11
4. Ամբեն ու Ռամբեն	15
5. Ուլ ումից վախեցավ	19
	25

ՀՀ Ազգային գրադարան



NL0391998

7851

1.
02

ფიზს 6 1 რ. 50 ჟ.

მე-1 = 2,74
გმ 2



გ ი ს ა კ
სუთი ზღაპარი
სახელგანი

Г И С А К
Пять сказок
САХЕЛГАМИ

ბეჭდვისი 1936 წ. ბილისი